Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական



Ի՞նչն է հետևում սիրուն

Ամեն սիրելի մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է, որ «սերը ավետարանի հենց էությունն է»:[1]

Սերն այնքան կարևոր է, որ Հիսուսը կոչեց այն «առաջին և մեծ պատվիրանք» և ասաց, որ մնացած բոլոր օրենքները և մարգարեների խոսքերը կախված են դրանից:[2]

Սերը կարևորագույն մղիչ ուժն է հանդիսանում այն ամենի համար, ինչը մենք անում ենք Եկեղեցում: Յուրաքանչյուր ծրագիր, յուրաքանչյուր ժողով, յուրաքանչյուր արարք, որի մասնակիցն ենք մենք դառնում որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ, պետք է սկիզբ առնի այս հատկանիշից, քանի որ առանց գթության՝ «Քրիստոսի մաքուր սիրո», մենք ոչինչ ենք:[3]

Երբ մենք հասկանում ենք սա մեր մտքով և սրտով, երբ մենք հայտարարում ենք, որ սիրում ենք Աստծուն և մեր մերձավորներին, ի՞նչ է հետևում դրան:

Արդյո՞ք ուրիշների հանդեպ կարեկցանք և սեր ունենալը բավական է: Արդյո՞ք Աստծո և մեր մերձավորների հանդեպ ունեցած սիրո մասին հայտարարելով մենք կատարում ենք մեր պարտականությունը Աստծո առջև:

Երկու որդիների առակը

Երուսաղեմի տաճարի մոտ քահանայապետերը և հրեա երեցները դիմեցին Հիսուսին՝ փորձելով ծուղակը գցել Նրան՝ Իր խոսքերի պատճառով: Իսկ Փրկիչն էլ նրանց փորձելով պատմեց մի պատմություն:

«Մի մարդ երկու որդի ունէր»,- սկսեց Նա: Հայրը գնաց առաջինի մոտ և խնդրեց նրան գնալ աշխատել այգում: Սակայն որդին մերժեց նրան: Հետո այդ որդին «զղջաց եւ գնաց»:

Ապա հայրը գնաց իր երկրորդ որդու մոտ և խնդրեց նրան գնալ աշխատել այգում: Երկրորդ որդին վստահեցրեց նրան, որ կգնա, սակայն այդպես էլ չգնաց:

Ապա Փրկիչը դարձավ դեպի քահանաներն ու երեցները և հարցրեց. «Հիմա այս երկուսից ո՞րն արաւ հօր կամքը»:

Նրանք ստիպված էին խոստովանել, որ դա առաջին որդին էր՝ նա ով ասաց, որ չէր գնա, բայց հետո ապաշխարեց և գնաց այգում աշխատելու:[4]

Փրկիչն օգտագործեց այս պատմությունը, որպեսզի շեշտեր կարևոր սկզբունք. նրանք, ովքեր հնազանդվում են պատվիրաններին, իսկապես սիրում են Աստծուն:

Հավանաբար դա էր պատճառը, որ Հիսուսը խնդրեց մարդկանց լսել և հետևել փարիսեցիների ու դպիրների խոսքերին, սակայն չհետևել նրանց օրինակին:[5] Կրոնի այս ուսուցիչները չէին քայլում իրենց ասած ճանապարհով: Նրանք սիրում էին խոսել կրոնի մասին, սակայն, ցավոք, անտեսում էին դրա նշանակությունը:

Արարքները և մեր փրկությունը

Իր աշակերտներին ուղղված վերջին դասերից մեկի ժամանակ Փրկիչը խոսեց նրանց հետ վերջին Դատաստանի մասին: Ամբարիշտները և արդարները կբաժանվեն միմյանցից: Լավ մարդիկ կժառանգեն հավերժական կյանքը. ամբարիշտներին սպասվում է հավերժական տանջանք:

Ո՞րն է այդ երկու խմբերի տարբերությունը:

Նրանք, ովքեր ցուցաբերում էին իրենց սերը արարքների միջոցով, փրկվեցին: Նրանք, ովքեր այդպես չէին անում, դատապարտվեցին:[6] Առ Հիսուս Քրիստոսի ավետարանը և դրա արժեքներն ու սկզբունքները իսկապես դարձի գալը կհաստատվի ամենօրյա կյանքում մեր արարքների միջոցով:

Ի վերջո, Աստծո և մերձավորների հանդեպ ունեցած սիրո մասին պարզապես հայտարարելը մեզ արժանի չի դարձնի վեհացմանը: Քանի որ, ինչպես Հիսուսն է ուսուցանել. «Ոչ ամեն ոք, ով ասում է ինձ՝ Տե՛ր, Տե՛ր, կմտնի երկնքի արքայությունը. այլ նա, որ անում է իմ Հոր կամքը, որը երկնքում է»:[7]

Ի՞նչն է հետևում սիրուն:

«Ի՞նչն է հետևում սիրուն» հարցի պատասխանը կարող է լինել պարզ և հստակ: Եթե մենք իսկապես սիրում ենք Փրկչին, մենք դարձնում ենք մեր սրտերը դեպի Նա, որից հետո քայլում ենք աշակերտության արահետով: Եթե մենք սիրենք Աստծուն, մենք կձգտենք պահել Նրա պատվիրանները:[8]

Երբ մենք անկեղծորեն սիրում ենք մեր մերձավորներին, մենք ձգտում ենք օգնել «աղքատներին և կարիքավորներին, հիվանդներին ու չարչարվածներին»:[9] Քանի որ նրանք, ովքեր կատարում են կարեկցանքի և ծառայության այս անձնուրաց արարքները,[10] Հիսուս Քրիստոսի աշակերտներն են:

Սա հետևում է սիրուն:

Սա Հիսուս Քրիստոսի ավետարանի էությունն է:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Սեր՝ ավետարանի էությունը», *Լիահոնա*, մայիս 2014, 91:
2. Տես Մատթեոս 22.36–40:
3. Տես Մորոնի 7.45–47:
4. Տես Մատթեոս 21.28-32:
5. Տես Մատթեոս 23.3:
6. Տես Մատթեոս 25.31–46:
7. Մատթեոս 7.21
8. Տես Հովհաննես 14.15:
9. Վարդապետություն և Ուխտեր 52.40
10. Տես Մոսիա 18.8-9:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Ուխդորֆը Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներին նկարագրում է որպես այնպիսի մարդկանց, ովքեր Իր հանդեպ իրենց սերը ցուցաբերում են իրենց արարքների միջոցով: Նա սովորեցնում է մեզ, որ «եթե մենք իսկապես սիրում ենք Փրկչին, մենք դարձնում ենք մեր սրտերը դեպի Նա, որից հետո քայլում ենք աշակերտության արահետով»: Հարցրեք նրանց, ում ուսուցանում եք, թե ինչպես է սերը մղել նրանց քայլել աշակերտության արահետով: Դուք կարող եք նաև կիսվել նրանց հետ ձեր փորձառություններով: Կարող եք նաև հրավիրել նրանց աղոթել ավելի շատ գթություն և ուժ ունենալու համար՝ անելու սիրուց մղված գործեր:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Պահել պատվիրանները և սիրել ուրիշներին

Երբ մենք մտածում ենք սիրո մասին, հաճախ առաջին բանը, որ գալիս է մեր մտքին, ռոմանտիկ ֆիլմերն են, շոկոլադը և ծաղիկները: Սակայն սերը՝ *իսկական* սերը, ավելի խորն է և ավելի անձնուրաց: Հիսուս Քրիստոսը ապրեց մեզ համար և մեռավ մեզ համար, քանի որ Նա սիրում է մեզ: Ի դեպ, երկու մեծագույն պատվիրաններն՝ են սիրել Աստծուն և սիրել մեր մերձավորին (տես Մատթեոս 22.36–40): Սակայն, ինչպե՞ս կարող ենք *ցույց տալ* ուրիշներին, որ մենք սիրում ենք իրենց:

Նախագահ Ուխդորֆը կիսվում է երկու որդիների մասին Քրիստոսի առակով, որոնցից մեկն աշխատում է իր հոր համար, իսկ մյուսը՝ ոչ: Փրկիչը շեշտում է, որ միայն այն որդին է իսկապես սիրում իր հորը, ով հնազանդվում է նրան: Նմանապես, երբ մենք հնազանդվում ենք Աստծո պատվիրաններին, մենք ցույց ենք տալիս, որ սիրում ենք Նրան և ցանկանում ենք վերադառնալ Նրա մոտ:

Իսկ ինչպե՞ս ենք մենք ցույց տալիս, որ սիրում ենք ուրիշներին: Նախագահ Ուխդորֆը նույնպես բացատրում է դա. «Երբ մենք անկեղծորեն սիրում ենք մեր մերձավորներին, մենք ձգտում ենք օգնել «աղքատներին և կարիքավորներին, հիվանդներին

ու չարչարվածներին»: Քանի որ նրանք, ովքեր կատարում են կարեկցանքի և ծառայության այս անձնուրաց արարքները, Հիսուս Քրիստոսի աշակերտներն են:

Ուստի, երբ հաջորդ անգամ տեսնեք ձեր ծնողին, ազգականին կամ ընկերոջը, մտածեք նրանց ծառայելու մասին, որպեսզի ցույց տաք նրանց հանդեպ ձեր ունեցած ջերմությունը: Դա ոչ միայն նրանց ու ձեզ կերջանկացնի, այլ նաև կերջանկացնի ձեր Երկնային Հորը:

© 2016 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, September 2016*-ի թարգմանությունը: Armenian. 12869 201

ԵՐԵԽԱՆԵՐ

Սեր ցուցաբերել

Հիսուսը կիսվեց հոր և նրա երկու որդիների մասին պատմությամբ: Հայրն աշխատում էր այգում և խնդրեց իր երկու որդիներին օգնել: Առաջին որդին սկզբում ասաց ոչ, բայց հետո եկավ այգի ու օգնեց: Երկրորդ որդին ասաց, որ կօգնի, սակայն այդպես էլ չօգնեց: Հիսուսն ուսուցանեց, որ առաջին որդին ավելի շատ սեր ցուցաբերեց իր հոր հանդեպ՝ հնազանդվելու միջոցով:

Բեմադրեք այս պատմությունը: Ապա գրեք կամ նկարեք երեք բան, որ կարող եք անել, որպեսզի ցուցադրեք ձեր սերը Երկնային Հոր հանդեպ:

Ծնող լինելը սրբազան պարտականություն է

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ձգտեք հասկանալ, թե ինչով կարող եք կիսվել: «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հոչակագիրը հասկանալն ինչպե՞ս կմեծացնի ձեր հավատքն առ Աստված և կօրհնի նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք reliefsociety.lds.org:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Մեր Երկնային Հայրը ստեղծել է ընտանիքները, որպեսզի օգնի մեզ ուսուցանել ճիշտ սկզբունքներ սիրո մթնոլորտում: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Հաճոյախոսեք ձեր երեխային և գրկեք նրան, ավելի հաճախ ասեք՝ «Ես սիրում եմ քեզ», մտապես շնորհակալություն հայտնեք նրան: Երբեք թույլ մի տվեք, որ այն խնդիրը, որը պետք է լուծվի, ավելի կարևոր դառնա, քան մարդը, որին պետք է սիրել»:[1]

Սյուզան Վ. Թանները՝ Երիտասարդ Կանանց նախկին գերագույն նախագահը, ուսուցանել է. «Մեր Երկնային Հայրը հանդիսանում է այն կատարյալ օրինակը, որին մենք պետք է հետևենք: Նա սիրում է մեզ, ուսուցանում է մեզ, համբերատար է մեր հանդեպ և վստահում է մեր ազատ ընտրությունը: . . . Երբեմն դաստիարակելը, որը նշանակում է «ուսուցանել», շփոթում են քննադատության հետ: Երեխաները, ինչպես նաև բոլոր տարիքի մարդիկ, ավելի են լավացնում իրենց վարքը սիրո և խրախուսանքի արդյունքում, քան սխալներ գտնելու արդյունքում»:[2]

«Եթե մենք հավատարմորեն անցկացնենք ընտանեկան աղոթք, սուրբ գրությունների ուսումնասիրություն, տանք քահանայական օրհնություններ և պահենք Հանգստության օրը,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Քվենթին Լ. Քուքը,- մեր երեխաները . . . պատրաստ կլինեն երկնային հավերժական տուն մտնելուն՝ անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունենում այս դժվարին աշխարհում»:[3]

Լրացուցիչ սուրբ գրություններ

1 Նեփի 8.37, 3 Նեփի 22.13, Վարդապետություն և Ուխտեր 93.40, 121.41

Իրական պատմություններ

«Ես թերթ էի կարդում, երբ փոքր թոռնիկներիցս մեկը բարձրացավ և նստեց կողքիս»,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը: «Կարդալիս ես ուրախությամբ էի լսում նրա քաղցր թոթովանքը: Պատկերացրեք իմ զարմանքը, երբ մի քանի րոպե անց նա թերթը մի կողմ քաշելով հայտնվեց իմ գրկում: Դեմքս առնելով իր ձեռքերի մեջ, քիթը հպելով քթիս, հարցրեց. «Պապիկ, դու այստե՞ղ ես»:

. . . *Այնտեղ* լինել նշանակում է հասկանալ մեր երիտասարդների սրտերը և կապված լինել նրանց հետ: Կապված լինել նրանց հետ նշանակում է ոչ միայն զրուցել, այլև գործեր անել նրանց հետ: . . .

Մենք պետք է պլանավորենք և օգտվենք ուսուցման պահերից: . . .

. . . Որքան շատ եմ ապրում, այնքան շատ եմ հասկանում, որ մանկության տարիներին ուսուցողական պահերի, հատկապես ծնողներիս կողմից տարված ուսուցման շնորհիվ է ձևավորվել իմ կյանքը և ես դարձել եմ այն, ինչ կամ»:[4]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, “Love at Home—Counsel from Our Prophet,” *Liahona,* Aug. 2011, 4.
2. Susan W. Tanner, “Did I Tell You . . . ?” *Liahona,* May 2003, 74.
3. Քվենթին Լ. Քուք, «Տերն է իմ լույսը», *Լիահոնա,* մայիս 2015, 64:
4. Ռոբերտ Դ. Հեյլս, «Աստծո առաջ մեր պարտականությունը՝ աճող սերնդի հանդեպ ծնողների և ղեկավարների առաքելությունը», *Լիահոնա,* մայիս 2010, 95:

Խորհեք այս մասին

Ինչո՞ւ է ավետարանը լավագույնս ուսուցանվում սիրո լեզվով ու օրինակով:

© 2016 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, September 2016*-ի թարգմանությունը: Armenian. 12869 201